

"Droschak"

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse :

Rédaction du "Droschak"

GENÈVE (Suisse)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՋՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

ԱՐՏԱՅԵՍ ԱՆԴՐԵԱՍԵԱՆ

(Ս Ո Ւ Ր Է Ն)

Գիշերաւան տարածաւ պահուն, երբ գրիչը ձեռքս կառնեմ երկու սող նւիրելու հերոսացած ընկերոջս յիշատակին՝ իր մանրամասն կենսագրութիւնը գրել չէ նպատակս:

Շատ հեռու պիտի տանէր ինձ նմանօրինակ ճիգ մը. իր մանկութիւնը չեմ գրեր, նիւթեր կը պակսին. կը գրեմ միայն, որ սամաթիացի էր ինքը, զաւակը սփոփիչ յիշատակներով լեցուն այն Սամաթիային, որ Պոլսի ամենէն ազնիւ եւ ամենէն աւելի հայ թաղն է եղած միշտ:

Եւ երբ աչքիս առաջ կը պատկերանայ Արտաշը իր դէմքին հանդարտութեամբ, իր խոհուն աչքերուն վճիտութեամբ, չեմ կրնար չյիշել ժայռերուն վրայ բուսնող այն վտիտ ու համեստ տունկերը, որոնք տակաւ կը մզնն առաջ իրենց արմատները հազիւ նշմարելի ձեղքերուն մէջ, — օր մը հաստաբետ կտորներ իրարմէ անջատելու համար, եւ կը հասնին խոնաւ կենսատու խաւերուն: Ինչ ալ որ ըլլար, ուր որ ալ ըլլար, Արտաշի կեանքը, իր, թերեւս անփառունակ, բայց ոչ աննշան դերը պիտի խաղար զինքը չրջապատող միջավայրին մէջ:

... Բայց ես կանցնիմ այն տարիներուն, երբ դպրոցի սեղանին վրայ ճանչցայ զինքը:

Ի՞նչ երկար տարիներ այդ սեղանին վրայ:

Իբր աշակերտ՝ ջանասէրներէն մէկն եղաւ Արտաշ, իբր ընկեր՝ լաւագոյններէն: Ըլլային թերեւս զինքը չսիրողներ, սակայն ամենքն ալ կը յարգէին այդ զօրեղ, առեւտույթ սառնարիւն, շիտակ պատանին, որ հեզ ու ներող էր իր ընկերական յարաբերութիւններուն մէջ, բայց կեղծութեան ու նենգութեան առջեւ կը փշրէր իր հանդարտութեան սառոյցը, եւ այն ատեն իրաւ սոսկալի էր Արտաշը իր ջախջախիչ բարկութեան մէջ, իր կարշնեղ բազուկներուն հարւածներուն տակ:

Միջավայրը իր կեանքին նպատակը տւաւ:

Իր ուսանողական տարիներն անցան երկու Մասիսնե-

րուն առջեւ՝ ընտելեան եւ հայրենիքի այն ուսումնասիրութեան մէջ, որ ձեւարանի լաւագոյն տարիներու փառքը մնացին: Արտաշը, — որ իր արձակուրդները անցուց Արագածի լանջերուն, Անիի աւերակներուն, Այրարատի գրեթէ բոլոր յիշատակարաններուն մէջ — անցեալի պղատունական կսկիծը իրական ցաւի մը փոխեց. բայց այդ ցաւը վհատիչ չեղաւ իրեն համար. աւերակներուն մոխրին տակ նոր կեանքի կայծերը տեսաւ՝ կենդանի կեանքով ու յուսով պնդւած հայ շինական, փաղքեցի, պոլսեցի Արտաշը լացաւ իր հայրերու գերեզմանին վրան, բայց ճանչցաւ, սիրեց այն ժողովուրդը, որուն պիտի նւիրէր իր ապագան, որուն եւ իր կեանքը գոհեց:

Հո՛գ միայն կրնար ըմբռնել ապագան, որովհետեւ հոգ ներկան անցեալին հետ կը կապէր:

Մինչ փարեանը (Բաբկէն) ու Գնունին (Շահէն) իրենց մօրթին, իրենց վզին վրայ զգալով բռնակալութեան լուծը, իրենց գիւղէն անցան Մայր-Հայրենիքի ազատութեան գաղափարին, Արտաշը անցեալով ոգեւորւած՝ նորէն անցաւ հայրենիքի վերածնութեան տենչերուն:

Առաջին երկուքը մասնաւորէ դիմեցին ընդհանուրին. երկրորդը՝ ընդհանուրէն մասնաւորին:

Բայց ապագային այդ հայեցողութեան մէջ պայքարը սկսած էր արդէն. ձեւարանէն սկսաւ այդ պայքարը. կղերական հոտանքին հետ մղւած այն յամառ, երկար մաքառումներուն մէջ, որոնց վրայ տեղը չէ հոս կանգ առնել, բայց որոնք Գէորգեան ձեւարանի պատմութեան ամենէն հետաքրքիր, ամենէն էական տարրերէն մէկը կը կազմեն: Արտաշը իր խառնւածքին լատինը տւաւ ընկերներու դասին: Այդ պայքարը իր գա-



Ս Ո Ւ Ր Է Ն
(ԱՐՏԱՅԵՍ ԱՆԴՐԵԱՍԵԱՆ)

գաթնակէտին հասաւ 1891-ի փետրւարին, երբ Գէորգեան ձեւարանի երեք լսարանները անկարելի համարելով որ եւ է հաշտութիւն իրենց եւ Նահապետեան-Կոստանեանի կղերական վարչութեան միջեւ, քամահրեցին ամեն բան՝ Այրարատի ցուրտը, դրամի պակասութիւն ու վկայական, եւ միահամուռ դուրս ելան ձեւարանէն:

Այդ օրը չպիտի մոռնան 1891-ի «խռովարարները». այդ օրը շատերու կեանքին մէջ ոլոր մը տւաւ... Անկախութեան ոգին, առեւտութիւն մը բռնակալութեան ամեն ձեւերուն դէմ սկսելով՝ հոգիի բռնաբարութիւնէն մինչեւ իշխաններու բռնակալութիւնը տարբեր օղակներն էին սոյն

չղթային:

Երբ Արտաշը 91-ին կը վերադառնար Պոլիս, ուրքը պրած էր արդէն այն ճամբուն վրան, որուն հանգրաւաններէն մէկն էր Օգոստոս 14-ը:

Իր ճամբան զիտէր. ուսուցիչ եղաւ, հակառակ իր ծնողներու եւ ծանօթներու զարմացումին, որոնք յիմարական կը գտնէին ինք տարւան ուսումէ ետքը խեղճ վարժապետ մը ըլլալ:

Արտաշ ժպտեցաւ միայն. պոլսեցի վարժապետին նւաստ դիրքը առածի կարգ անցած էր արդէն Կովկասի մէջ. չարհամարհեց, այլ ցաւեցաւ տղէտներուն վրան եւ ինքը գործի ձեռնարկեց՝ իր պարտքը կատարելու, իր օրինակով այդ ազնիւ ու վեհ արեւստը բարձրացնելու եւ ժողովրդի վերածնութեան աշխատելու հաստատ համոզումով:

Իր հինգ տարւան գործունէութեան մէջ վաստակեցաւ թշնամիներ. Ռոտոսթայէն զիշերով փախաւ՝ նախկին թագաւորներէն եւ Դիմաքոսեան Հմայակ եպիսկոպոսէն, իրրեւ յեղափոխական մատնելով տեղական կառավարութեան:

Իր «գաւառին»՝ Սամաթիոյ մէջ, իրրեւ «մարդարէ», պատիւ չունեցաւ. բարերարեալները չա՛տ խորունկ արմատ ձգած էին. եւ վերջապէս թագաւորները դեռ նոր կը տեսնէին ամեն բան շիտակ գուրցող, իր պարտքին, բայց իրաւունքներուն ալ զիտակ վարժապետ մը:

Իբր ուսուցիչ՝ Արտաշը թերեւս միակն էր իր մասնապետութեան (թւարանութիւն) մանկավարժական մշակումովը:

Եթէ իրեն նախաձեռնութիւն կը պակսէր, բայց յուսահատողներէն չէր. կրնամ ըսել, որ փառքի սէրը իր զգացումներուն մէջ երկրորդական տեղ կը բռնէր. իր իտէալը համեստ, անգուլ գործունէութեան մէջ էր:

Վարժապետութիւնը յեղափոխութեան մէկ մասը կը նկատէր. չէ՞ որ իր լուրը ջանքը նւիրած էր նախապաշարունակ արմատախիլ ընելու, նոր գաղափարներ քարոզելու, ապագայ քաղաքացիներ պատրաստելու: Վարժապետութիւնը յեղափոխական գործունէութեան օրինական (լեկալ) ձեւն էր իրեն համար: Իսկ այդ ամբողջը՝ յեղափոխութիւնը իտէալին ձգտումն էր իրեն համար, զէպի արդարութիւն եւ զեղեցկին յաղթանակը, որուն ջերմ հաւատացողներէն էր ծայրայեղ իտէալիստի բովանդակ լաւատես պութեամբ:

Պոլսի մէջ «Դաշնակցութեան» առաջին յարողներէն մէկն եղաւ. իրեն համար շարունակութիւն մըն էր այդ կեանքը՝ Այրարատի իր կեանքին, ուր «Դաշնակցութեան» զինուորները տեսած, սիրած ու պաշտած էր:

Իրեն պէս ոյժ մը պարզ գործիչ մը չէր կրնար մնալ. շատ չանցաւ Արտաշ իր գործակից ընկերներու հետ միասին Կովստէի վերածնեցան, որ «Զոհ» անունը ընդունեց: Պզտիկ միջադէպ մը կը յիշեմ ակամայ. Կովստէի անգամները, ըստ ներքին կանոնադրին, պարտաւոր էին պատուոյ խօսք տալ՝ թէ անտրտունջ պիտի երթային հոն, ուր ընկերներու կամքը, իր խիղճը եւ պարագաները հրամայէին: Արտաշ անկեղծաբար յայտնեց այդ պայմանին դժարութիւնը իր համար. բաղմանդամ ընտանիք մը պահելու հարկին մէջ՝ գրեթէ անկարելի պիտի ըլլար իրեն համար թողու երթալ հեռաւոր վայրեր: Ընկերները, ինչպէս եւ Կեդրոնական Կովստէն՝ արդէն տեղեակ այդ պարագային՝ անոր անկեղծութիւնը գրաւական մը համարեցին իր գիտակից գործունէութեան եւ չպնդեցին:

Ապագան ցոյց տուաւ, որ այդ նկատումները սոսկ անձնական հանգամանք մը չէին կրնար:

«Զոհ»-ը Պոլսի տեղական լաւագոյն Կովստէներէն մէկն եղաւ իր ունեցած ուժերով, որոնց մէջ Արտաշը իր որոշ դերը ունէր կատարելու: Մինչ մէկ կողմէն կը հակակշռէր Գնունիի անսանձ խանդը, միւս կողմէն իր շիտակ, սննդարդախ եւ արգարակորով բնաւորութեամբ լրջութիւն կը մոյնէր խորհրդածութեան ենթակայ ամեն նիւթերու մէջ:

Անագորոյն ու կատաղի կռիւ մը իր տենչանքն էր եղած առաջին օրէն եւ ծայրայեղ միջոցներու գործածութիւնը ինքը առաջիններէն էր, որ առաջարկեց եւ պահանջեց:

Ռուսներու եւ տինամիտի զոյաթիւնը երկար ժամանակ Պոլսի Կեդրոնական Կովստէի եւ տեղական «Զոհ»-ի գաղտնիքը մնաց. մայիսի մէջ միայն Կեդրոնական Կովստէն հարկ դատեց անոնց առաջին բաշխումով գնադեղ եւ գոյութիւնը յայտնել տեղական միւս Կովստէներուն: Մայիսի զիշեր մըն էր «Զոհ»-ի հինգչաբթի օրւան նիստերէն մէկը. այդ օրը պայուսակով մը առաջին նւէրը իրկեւծ էր «Զոհ»-ին ժողովը, որ դեռ նոր սկսած էր. տեսակ մը հանդիսաւորութիւն ստացաւ, երբ Պոլսի Կեդրոնական Կովստէի ներկայացուցիչ-ընկերը պայուսակը բաց արաւ, եւ առաջին անգամ ըլլալով, ցոյց տուաւ ռուսները «Զոհ»-ի անդամներուն եւ գործածութեան կերպը բացատրեց անոնց: Զսպած ուրախութիւն մը եւ խանդավառութիւն մը փայլեցաւ ամենուն աչքերուն մէջ: Արտաշը, ամենէն պաղարիւն համարւածը, հրճանքով մը առաւ ձեռքը, փայփայեց այդ գունտերը եւ իր խրոխտ ու համակիր ձայնով ըսաւ.

«Հիմա Պոլիսը մերն է»:

Այդ օրէն կրկնապատկեցաւ իր ուժը, որովհետեւ հաւատքը հաստատուն եղաւ իր մէջ: Այդ երկու վերջին ամիսներու տենդոտ գործունէութեան մէջ Արտաշը զարմացուց մեզ իր եռանդով եւ վարչական տակտով:

Գնունին եւ ինքը՝ իրենց միմեկին առջին Սամաթիոյ պաշտպանութեան խնդիրը, որուն մանրամասնութիւնները արդէն շատ առաջ ձեռնած էին «Զոհ»-ի նիստերուն մէջ, իրենց ծրագիրը շատ գործնական, սքանչելի արդիւնքներ պիտի արտադրէր, եթէ օգոստոս 14-ի առտուն ոտովկանութիւնը հոտ մը առնելով՝ պաշարած չըլլար Սամաթիոյ Կուռղներէն անոնք. որ իրենց գիրքը բռնելու պիտի երթային մաս առ մաս մինչեւ ցերեկեան ժամը 6 (ըստ թր.), իրենց ձաճան կտրւած գտան զինուորական չղթայով:

Արտաշը չչփոթեցաւ. մինչ մէկ կողմէն լուր իրկեց Կեդրոնական Կովստէին Սամաթիոյ գրութեան մասին, ինքը Գնունիին հետ կեցաւ իր գիրքին մէջ, իրրեւ զինուոր մը, հնազանդ տրւած որոշման:

Իրենց այդ պաղարիւն զինուորի ըմբռնումը պարտքի փրկեց գործը. եթէ ընդհանուր չփոթի միջոցին, երբ սամաթիացիներ կը փախչէր իր հայրենի սնէն առանց ետեւը նստելու, երբ ոտովկանները, իրենք ալ չարած, իզուր կեցնէր կը ջանային փախչողները եւ կրցածնին կը ձերբակալէին, եթէ ինքնապաշտպանութեան բնազդներու զարթնումն ամենէն կոկծեցուցիչ վայրկեանին տղայքը սկսէին գործի՝ շատ բան կորսած էր. ոտովկանութիւնը եւ Պոլսի ժողովուրդը շատ ուշ ըմբռնեց գործին ծանրութիւնը. ռուս բին գոյութիւնը ժամը 6-ին միայն յայտնեցաւ միանգամայն պանքային եւ Միաքեաններուն տան առջեւ:

Ի՞նչ զգացին տղայքը այդ 18 երկաթ ժամերուն մէջ. շատ քիչ բան գիտնք. ո՛չ ոք կենդանի մնաց այդ իսկական թերմոպիլէէն պզտիկ տղեկէ մը զատ:

Սակաւաթիւ հայեր, եւ ոտովկաններ, որոնք ականատես եղած են այդ հերոսական կռիւն, շատ բան կը պատմեն:

Գնունի մասին. գրեթէ ոչինչ՝ Արտաշին. Չեմ գարմանար. այդպէս ալ կոպասէի. կը հաւատամ, որ Արտաշը, հաւատարիմ իր խառնածքին, կորովապէս գործեց, դիրք որոշեց, իր պաղարինովը ներսինները քաջալերեց, մինչեւ այն անմոռաց վայրկեանը, օգոստոս 15-ի առտուն, երբ ուժասպառ, զուրկ ռազմամթերքէ, ո՞ր եւ է օգնութենէ, յոյսերնին կտրած՝ վերջին գնդակն ալ թշնամուն խրկեցին եւ իրենց հրաժեշտը տւին իրարու . . . թոյնի գաւաթներով:

Այդ ճշմարիտ հերոսական կռիւը լաւագոյն էջը կը կազմէ օգոստոս 14-ին, եթէ պանքայի դուռը իր տարօրինակ յղացումով եւ գործադրութեամբ սարսափեցուց Պոլսի եւ լոսպական թաղերը եւ դեսպանները, անդին՝ Ստամպուլի թիւրք թաղերը սոսկումով եւ հիացումով կը յիշեն դեռ այդ ափ մը քաջնը, որոնց ազգած վախը փրկեց այդ կողմի բոլոր հայ թաղերը պաշտպոզուկներու յարձակումէն, եւ որոնց հետաքրքրական մասը յեղաշրջեց իրենց համարումը վատ ու վախկոտ համարւած հայերու մասին, եւ մօտալուտ անձանօթ ապագայի մը սարսափը տաւ . . .

Հայ ժողովուրդը անգամ մըն ալ տեսաւ ու զգաց, որ յեղափոխութիւնը խաբէրաներու գործը չէ, երբ անոր քաւորդիները անոր վարիչները եղան, կուռղներու առաջին շարքին մէջ կանգուն, մինչեւ իրենց վերջին շունչը հաւատարիմ մնացին իրենց դրօշակին:

Անոնց գերեզմանները՝ ապագային ուխտատեղիները, յեղափոխութիւնը կենսական պիտի ընեն, պիտի մարմնացնեն՝ զայդ ժողովուրդին գիտակցութեան մէջ եւ նոր գործիչներու ծափուն վրան իբրեւ փարօսներ պիտի շողան, անոնց քայլերը ուղղելու . . .

Դ Ի Ի Ա Ն Ա Ք Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հասարակական երեւոյթներուն մէջ դիւանագիտութիւնն է, որ ամենէն աւելի խաբէրայական արեւստ մ'է: Անոնք, որ չեն կրնար խաբել, կըսէր, դարեր առաջ, Ֆրանսացի թագաւոր մը, չեն կրնար կառավարել: Այս եղած է ամեն դարու մէջ քաղաքականութեան բարոյական ոյժը եւ նշանաբանը:

Դիւանագիտութիւնը կը նաւարկէ ժողովուրդներու տառնապանքի ուղիներին վրայ, որու նաւագետն է քրմահաճ բռնակալը եւ նաւաստիները կը կազմեն մարդկութեան ամենէն անխիղճ, ամենէն սնափառ արարածները, որոնց կամայական օրէնքներն են, որ կը վարեն այսօր ազգերու ճակատագիրը: Այդ թշուառութեան ուղիները ահեղ ալեկոծումներ ունի սակայն եւ դիւանագիտութեան բազուկին կռթնած շէնքը անդունդին վրայ մագէ կախւած է:

Որչափ ատեն մարդիկ կոյր գիտակցութեան մը կը հեղեկէին, որչափ ատեն «վարդապետն ասաց»-ի օրէնքը տիեզերական էր, մարդկութիւնը քստմեղի ճգնաժամեր անցուց: Եւ այսօր մարդկային գիտակից շրջանին մէջ, դեռ ժողովուրդները կը տանջին, տաժանքներ կը քաշեն, դիւանագիտութեան խորթ զգացումներու ծընունդ եղող ռազմական ահեղ կազմակերպութեան տակ:

Մինչեւ օրս դիւանագիտութիւնը երբեք չէ առաջնորդւած մարդասիրական բարձր ու անշահանդիր թելադրումներէ, ընդհակառակը քաղաքակիրթ աշխարհի գլխուն վրայ դաւադիր մարմին մ'է, որուն գերագոյն պաշտօնն է սրբազան խարոյկին պէս վառ պահել, ժամանակին բերմամբ ազգերու մէջ առաջ եկած պտելութիւնները ծառայեցնել կարգ մը հացկատակներու հաճին ու դաւաճանութիւններ նիւթել ժողովուրդներու անդորրութեան, լուսաւորութեան ու առաջնաղացութեան դէմ. կը նկրտի զանոնք միշտ գետնամած ու գլխիկոր պահել, ու ազգային շահերու պաշտպանութեան կեղծ դիմակին տակ կը թշուառացնէ նոյնիսկ իր արիւնը կրող ժողովուրդը:

Իրողութիւն մ'է՝ թէ ժողովուրդները ինքնաբերաբար կը ձգտին եղբայրութեան: Միևնոյն հողին վրայ ծնող ու սնող տարբեր ազգաբնակչութիւններ այնպէս եղբայրաբար կապին—երբ ատոնք աշխատելու ընդունակ են—որ բնութեան գրկին մէջ, ուր պայքարը աւելի հողին հետ է, չեն մտածեր մինչև իսկ ազգայնական ոսոխութեան վրայ: Արգարեւ, ժողովուրդները իրենց մէջ մեծ սկզբունք մը ունին, որ իր պարզութեան մէջ ի վեր կը հանէ անոնց միամիտ, բայց խորին փիլիսոփայութիւնը: Ամենքնիս ալ «հողեղէն եղբայրներ» ենք, ինչպէս տաճիկը մոռնալով երբեմն կրօնական մոլեռանդութիւնը, կըսէ «թօփրաք գարտաշըիդ»: Ուրեմն ի բնէ ազգայնական խտրութիւնը չունի այն սաստկութիւնը, ինչպէս որ կը տեսնենք այսօր բարբարիկ քաղաքակրթութեան մէջ: Դիւանագիտութիւնը բնաւ ժողովուրդային ոգուն անկեղծ արտայայտութիւնը չէ. այլ չենք գիտեր, բնախօսական ինչ երեւոյթի մը գարշելի մէկ հնարքը, որուն հետ կը լծորդի պժգալի փառամոլութիւն մը: Մարդկային արժանապատուութիւնը կը պոռնկացնեն պալատներու խորհրդաւոր մթնոթեան մէջ:

Ռուսօին ըսածին պէս՝ տխմարները առաջնորդող կըլլան ծերերուն ու իմաստուններուն . . .

Սա հսկայ բանակները, որոնք Դամոկլէսի սուրին պէս կախւած են ժողովուրդներու սրտին վրայ, նիւթական կամ բարոյական ո՞ր է օգտակարութիւն չունին երկրին: Ընդհակառակը, ծոյլ ձրիակներն են եւ իրենց զօրանոցներուն մէջ, կը պատրաստւին ոճրագործութեան եւ քանդակարչելի մոլութեանց ենթակայ կըլլան: Թիւրք զինուորները կաթիլ մը օգուտ չունենալէն զատ, ուր որ ոտք դնեն, հոն աւեր ու ամալի կընեն, խաղաղ ժողովուրդին ինչքը բռնի կը յափշտակեն եւ ընտանեկան պատիւը իսկ կաղարտեն: Բանակը ահեղ ուժ մ'է, իրեն ետեւ ունի բռնակալը ու դիւանագիտական վոհմակը: Ռուսիայ օրէ օր կաւելցնէ իր անթիւ բանակներու թիւը, ատով ոչ միայն քաղաքակիրթ աշխարհը ահ ու դողի մէջ կը պահէ, այլ նոյնիսկ չի թողուր, որ իր ժողովուրդը, ոտքերը ագիտութեան ու խեղճու:

Թեան ճախճախուսէն դուրս հանէ:

Եթէ կան ստրկամտութեան մէջ քարացած ժողովուրդներ, կան նաև իրենց վիճակին գիտակիցներ: Ժողովուրդներու մէջ բարոյական-մարդասիրական անդիմադրելի ոյժ մը կը խմորւի, որ հետզհետէ կը հակա-կշռէ բռնակալներու և խարդախ դիւանագիտութեան խորթ ձգտումները:

Կը հաւատանք մարդկութեան երանաւէտ ապագային, կը հաւատանք յերկրային դրախտին: Պիտի գայ ժամանակ, ուր մարդիկ սուլթաններու, ցարերու, վիլ-հէյններու կամ Պիլմարքներու անունները բերան պիտի չառնեն, չարատաւորելու համար այն դարու մեծութիւնը: Պիտի նետեն այդ անունները, նոյն իսկ անցելոյն մէջ ատոնց յիշատակին կանգնած արձանները փոշիներու տակ, և պիտի խղճան մեր գարուն վրայ, որ իր մեծագոյն խորհողներուն քով, ամենամեծ ոճրագործները պահած է . . .

Ազգայնական կեղծ շահերու պատրուակին տակ, լաւագոյն է ըսել մասնաւորներու շահերուն համար՝ ամեն կողմ կոտորած, հալածանք, թշուառութիւն կը տեսնենք: Կառավարութիւնները անխնայ կերպով թնդանութի կը բռնեն մարդկային իրաւունք պահանջողները: Դիւանագիտութեան ականջին ջրի ձայն կուգայ տկարին արգար պահանջը: Ե՞րբ տեսնած է, որ բռնակալները, որոնց պալատները գաւաճանութեան և հակամարդկային յղացումներու որջեր են, սրտի բարձր ներշնչումէ մղւած՝ գնահատեն մարդկային բարձր ինքնաճանաչութիւնը: Անկարելին պահանջել է:

Անշուշտ մենք չենք կրնար համբերել, որ ազնիւ ու վեհանձն իղձերով լի ժողովուրդ մը, ինչպէս հայը, աշխարհի երկու ոճրագործ բռնակալներու կամակից դաւադրութեան զոհ երթայ: Ռուս կառավարութիւնը, ընկերային յառաջագիմութեան այդ սարսափը, ինչպէս կըսէր Մաքս, մինչև վերջը Կայսերի մը դեր կատարեց Հայկական հարցին մէջ: Մենք Սալզպրիի կամ Ֆրանսական երեսփոխաններուն պէս նկատումներ չունինք քրիստոնեաներու ինքնակոչ պաշտպան ցարերու սիրագործութիւնները քողարկելու համար: Գիտենք՝ թէ ցարը միլիոնաւոր զինուորներ ունի, որոնք պատրաստ են իր մէկ ականակին վրայ, ամբողջ հայութիւնը արեան մէջ լողացնել, կզգանք՝ թէ աշխարհի մէջ ուժեղները դեռ վայրենիներու դերեր կը կատարեն, բայց մենք կը ճգնինք նորէն ու կը կուրինք: Մեր մարդկային իրաւունքները, մեր խտէալը կը սրտապնդեն մեզ, որպէսզի չի վեհատինք ու անիրաւութեան աշխարհի մէջէն ազատութեան տապարով մեր ուղին բանանք: Եթէ մեր պահանջները անարդարութեան, կեղծութեան վրայ հիմնուած ըլլային, կը սողայինք զօրեղներու առջև և վար կիշնէինք մարդկային արժանապատուութեան աստիճանէն: Ո՛չ, ազատութեան, բարօրութեան թւականի մը ետեւէ վազողը, կը գտնուի բարոյական անարատ բարձրութեան

մը վրայ. մենք չենք պաղատիր, այլ կոչում կընենք խղճամիտ քաղաքակրթութեան և կը դիմենք անոնց մարդկային պարտականութեան: Իրաւունք ունիք այդ ստիպողական պահանջն ընել մեզ շրջապատող լուսամիտ հասարակութենէն:

Որքան ատեն ժողովուրդները իրենց նշանաբան չընտրեն «Ծանիր զքեզ»-ը, այս աշխարհը դարձաւ հոգիւտ՝ մը պիտի մնայ միշտ:

Ազատութեան ձգտող ժողովուրդներուն համար նշանակութիւն չունի բռնակալ-դիւանագիտութեան չարամտութիւնները և անոնց խարդաւանքները: Եթէ ամեն բան անոնց քմահաճոյքէն կախած ըլլար, դաւաճութիւն՝ բառը գոյութիւն չէր ունենար:

ՆԱՄՍԿԱՆԵՐ ՊԱՐՍԿԱ-ՏԱՃԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԹԻՅ

23/5-ին դեկտեմբեր 96 թ.

Վանի և առհասարակ Վասպուրականի մէջ կոտորածը դադարել է, բայց ո՞ր տեսակ կոտորածը. սուլթանի կառավարութեան մահադիմ օրին, ջարդ ու արիւնին այժմ տեղի է տւել ժանտառնեղը և կամաց-կամաց էլ սպառնում է սովը: Վանից հասած վերջին լուրերը տեղեկացնում են մեզ, որ Վանում սկսել է ժանտառնեղ երեւալ, որը օրեկան 30-40 զոհ է տանում, նոյն բանը սկսել է երեւալ նաև գաւառներում:

Կառավարութիւնը արդէն վաղուց երկրում եղած ցորենները ամբարել է իր գոթերի և հրոսակների համար. քիչ ժամանակ էլ անցնի և ահա պիտի սկսի սարսափեցնող սովը: Պատրաստ ուտելիքները կառավարութիւնը հաւաքեց, իսկ դաշտում եղածները մինչև այժմ էլ մնում են անշարժ, շատ տեղերում այրւած են քրդերից, իսկ մնացեալները ձեան տակ փռում են, երեւի գարնանը բուսնելու համար . . . Սահմանագրուի վոթերով լցնում է միշտ կառավարութիւնը: Վերջերս իբր թէ կառավարութիւնը ուզում է հայերից ևս ոստիկանութիւն և ժանդարմերի կազմել բարեխնամ սուլթան Համիտի կարգադրութեամբ. թէ ի՞նչ է սպասում երկրում եղած հայ ժողովուրդին, դեռ անյայտ է մեզ համար: Շատ-շատերը՝ թէ Վանից և թէ գաւառներից գաղթեցին այս աշնանը երկրից դուրս, մի մասը Պարսկաստան, միւսը Վովկաս: Աղբակ գրեթէ դատարկւել է: Այստեղ եղած աղբակցիներից մօտ 50-60 տուն կրկին վերադարձան իրենց տեղերը շէնաւերակների վրայ . . . տաճիկ կառավարութեան խորհրդով:

Ամերիկացի միսիոնար մըստըր Լօվարդը և մըստըր Ալէնը—վերջինը Վանում է լինում—ինչ որ նպատակներով բաւական ժամանակ ման եկան այս կողմերը գաղթականութիւն հաստատելու համար: Նրանք աշ-

խառնում էին երկրից դուրս հանել հայ ժողովուրդը և արգէն դուրս եկածների հետ միասին տեղափոխել Ամերիկայի ով է իմանում որ անկիւնը, բայց չօջողեցան իրենց այդ մտքերով ու նպատակներով. մէկը Ալէնը երկիրն անցաւ, իսկ միւսը վերադարձաւ Ամերիկա... Ինչպէս են օգնում լուսաւորւած երկիրները... լուսաւորւած մարդիկ...

Ճիշտը չգիտենք, բայց լսեցինք մի այսպիսի բան՝ թէ Ամերիկայից նորաւարտ անգամահատների, վերաբոյժ բժիշկների մի հոսանք է սկսել Ասիական Ցածկաստանում զոհուած հայ դիակների վրայ գործնական փորձեր անելու և վերադառնալու կրկին Ամերիկա...

Սուլթանը ուրիշ կերպ է օգտուում, իսկ Եւրոպ-Ամերիկան այլ կերպ:

Աերջերս քիւրդերը նորից երես են առել և անգէն ժողովրդի վրայ են թափում իրենց կատաղութիւնը: Նրանք անպատմելի վայրենութիւններ են անում Աղբակուս: Եկողները պատմում են այսպէս, թէ քիւրդերը մի գիւղից միւս գիւղը գնալիս, փոխանակ իրենց ձիաները հեծնելու, վերցնում են 3-4 հայ և կարգով հեծնում են շինքներին ու այդպէս գնում իրենց տեղերը: Լողանալու ժամանակ մերկացնում են հայ կանանց և երբեմն էլ տղամարդոց և պառկեցնում մէջքի վրայ գետին, իրանք էլ մերկանում և պառկող սրտի վրայ նստած լողանում...

Հինգ-վեց հայերի միասին լծում են գութանին և իրենք խարազանը ձեռքերում անդադար ծեծում են, որպէսզի լծածները չկանգնեն՝ գետինը շուտ հերկւի... ծեծում են այնչափ, մինչև որ խեղճերից սկսում է արիւն հոսել և թրջել գետինը... հողը կը փափկանայ այդ արիւններից և աւելի հեշտ կը հերկւի... և շարունակում են այդպէս, մինչև լծածները բոլորովին ջարդուփշուր եղած գետին են թաւալում արիւնի մէջ շաղախւած, անզգայ...

Այս տեսակ բարբարոսութիւնները տեսնելով, դեռ շատ աղբակցիներ վերադառնում են իրենց տեղերը: Դեռ ամառականից, Մ. Աւետիսեանի 800 հոգուց բաղկացած խումբը երբ ջարդուց Աղբակում, Բարդուղիմէոսի վանքի մօտ, դեռ այն ժամանակներից՝ պատմում են ճանապարհորդները՝ շատ դիակներ անթաղ են մընում դաշտերում, ճանապարհների եզերքներում, ձորակներում այլանդակւած, սրախողխող եղած մնում են. շատ քարեր արիւնով ներկւած՝ սեին են տալիս հեռւից. հարցնողին՝ թէ ինչ արիւն են սրանք, քրդերը պատասխանում են. «Այդ արիւնները ֆլա (հայ) կաշաղների արիւնն է, իսկ այն դիակները հայ կաշաղների դիակներ: (Խիւնէ կաշախէ ֆլան ա. ջէնդէկէ կաշախէ ֆլան ա):

Ցածիկ կառավարութիւնը խուլ պատրաստուում է գարնան համար, թէ ինչո՞ւ, գուցէ այդ միայն ինքը՝

սուլթան-Համիդը գիտէ. իսկ երկրի հայ տարրը սարսափով սպասում է գարնան...

ՆԱՄԱԿ ՊՈԼՍԻՑ

20/1 յունւար 97 թ.

Պոլիս բնաւ ապահովութիւն չի կայ. դրսի խաղաղ երևոյթը բոլորովին խաբուսիկ է: Ո՛չ սուլթանին փորէն դեռ վախը ելած է, ո՛չ ալ հասարակութիւնը ինքզինք վտանգէ զերծ կը կարծէ: Ամեն մարդ քալած ատեն՝ պզտիկ աղմուկ մը լսածին, ամեն բան ձգել փախելու տրամադրութեան մէջ է: Դեսպաններու պահակաւաւորը կազմ կեցած են Վոսփորի մեղկ ջուրերու մէջ. ոմանք հեգնօրէն կըսեն՝ թէ երբ անգամ մ'ալ իրարանցում ըլլայ, տէրութեանց նաւերը յօրանջելով շոգեպինդ պիտի փախչին ձանձրացած ըլլալով սուլթանի հաստատակամութենէն: Մահմետական ամբօխին մէջ մեծ յուզում կայ. ոստիկանութիւնը կը ջանայ խիստ հսկողութիւն ի գործ դնել... Ամեն օրւան լուրերու օրակարգին մէջ է սատարաձայնութիւնը՝ թէ «թիւրքերը մեծ բան մը պիտի պայթեցնեն, թէ կը պատրաստին Երլտզի վրայ քալել... քալել ու քալել...» Բայց խաղաղասէր սուլթանը ամեն ալ կը լռեցնէ, որը պատրաստուի, որը մարմարայի ձուկերուն կեր տալով, որը ո՞վ գիտէ ինչ ընելով:

Պոլիսը մայրաքաղաքի շէնքշնորհք չունի. ամեն կողմ ախուժախ, լրբութիւն և դաւաճանութիւն: Թիւրք պաշտօնեաները յուսակտուր դիրք մը բռնած են, ձեռքերնին անցածը կը սօթտեն թող կուտան: Դեսպաններուն ամրափակ նիստերը մոլորակներ առաջ բերած են մահմետական հասարակութեան մէջ. բայց պտտող լուր՝ թէ դեսպանները տաճիկներուն կացութիւնն ալ նկատի պիտի առնեն, քիչ մը հանդարտեցուցած է կիրքերը, թէև մոլեռանդ խաժամութը չուզեր, որ կեանքները «ցամաքներու և ծովերու տիրապիտող» սուլթանի գործին խառնուին: Ասով մէկտեղ թիւրք ժողովրդին խաղաղիկ դասը, որ իսկապէս ցանկացող է երկրին անդորրութեան, և գազանութիւններու գաղարման, վհատած է թիւրքիդ փրկութենէն. կոյր հաւատքի պզտիկ միութարութիւն մը անգամ չոգեւորեր զինքը երկրին ապագային նկատմամբ, որովհետև ամեն տեղ կը տեսնէ գողերու և բախտախնդիրներու ընկերակցութիւններ, անխիղճ անձնաւորութիւններ, որոնք ոտնակոխ ըրած ընկերային ու մարդկային ամեն արժանապատուութիւն, առիթէն օգուտ կը քաղեն և անպատիժ ամեն ստորնութիւն ու չարիք կը գործեն յայտնի կամ գաղտնի, իրենց գլուխ ունենալով Համիտի պէս եղեռ-

նագործութեան մեծ պաշտպան մը:

Մէկ խօսքով, երկրին պարկեշտ դասը զնաաններու և անծանօթ մուսլ տեղերու մէջ կը փոտի և կը հատնի. մէջտեղը մնացած են այն տեսակ մարդիկ, որոնք եթէ գոհճիկ դասակարգին մէջ մնացած ըլլային, գոյ մարդասպան և խաբեբայ տիտղոսներով պիտի յորջորդէին:

Հայ բանտարկեալները հետզհետէ կարճակէին: Պէտք է մտիկ ընել այդ թշուառներու պատմութիւնը. Տանգէի դժոխքը դրախտ է տաճկական «մէհտէրանէ»-ներու քով: Բանտերուն նկարագրութիւնը լսելով մինակ՝ մարդ ահաբեկ երազներու և ջղային հիւանդութեան ենթակայ կը լլայ: Ան, որ ունի մարդկային արժանապատուութիւն, տեսնելով այս ամեն անլուր արարքները, Թիւրքիոյ պէս պետութիւն մը աշխարհի երեսէն վերնալու համար ու և է միջոց չի խնայեր: Պետութիւն չէ ասիկա, «պաթախանէ» է, զլխէն մինչև ոտքը սիֆիլիզով վարակած: Գողութիւն, անառակութիւն, ոճորագործութիւն իրենց ճիւղերով, և զազիր մոլութիւն, ահա այն սիւները, որոնց վրայ կը բարձրանայ քսաներորդ դարու սկիզբը, սուլթան Համիտի բեթիմը: Ափսոս, երկու տարի առաջւան երկրաշարժը գետնի հաւասար ընելու էր Պոլիսը, բայց կարծես ընութիւնն ալ իր քմահաճոյքի խաղերն ունի մարդկային ողբերգութիւններուն մէջ: Չէ՞ որ արդէն հայ բանաստեղծը ըսաւ. «Աշխարհ ալ Աստուծոյ ծաղրն է...»:

Նոր պատրիարքը կաշխատի, բայց այնքան կը սողայ, այնքան կստորնանայ, որ ազգային ամենէն նւիրական զգացումներուն իսկ չի խնայեր: Արդէն հայ ժողովուրդին մէջէն տրտունջի ձայներ կը լսին, ըսելով՝ «ոչ այդ նւաստացումը ըլլայ՝ ոչ ալ այդ անիծեալ փատիշահին շնորհքը»:

Ամեն անգամ, որ պատրիարքը բեմ կը բարձրանայ սուլթանին համար փառաբանութեան, բարեմաղութիւններու հեղեղի տակ կը խղդէ բազմութիւնը:

Սուլթանի ծննդեան տարեդարձի առթիւ ժողովուրդին սա խօքերը կուղղէ՝ «օգոստափառ սուլթանը բանտարկեալները ազատելով՝ բոլոր ազգը շնորհապարտ թողուց և այլն»: Ամբոխին մէջէն զսպւած մրմունջներու արձագանք մը բարձրացաւ. «սրբազան, նահատակները շնորհապարտ թողուց...» Եւ կը յորդորէ վշտահար ժողովուրդին, որպէսզի եթէ առաջ մէկ հաւատարիմ էր, հիմա տասնապատկէ այդ հաւատարմութիւնը, որովհետեւ սուլթանը մեծ մեծ բաներ փսփսացեր է երանելի պատրիարքին ականջին. թէ սուլթանը իր գութն ու հովանին առջի պէս ամբողջ հայութեան վրայ պիտի տարածէ, վերջապէս այնպիսի ոսկեզօծ լեզու մը, որմէ մարդ կը փորձէ հետեցնել՝ թէ սուլթանը պիտի ձգէ Երլտըք ու Հայաստանի մէջ հայկական թագաւորութիւն պիտի հիմնէ, իր անքաւելի մեղքերը քաւելու համար: Թէև Օրմանեան կը պնդէ՝ թէ հայոց ազա-

տութիւնը այս աշխարհէն չէ...

Ծննդեան օրը պատրիարքին անդրանիկ կոնդակը կարդացւեցաւ բոլոր եկեղեցիներուն մէջ: Այդքան ծիծաղելի կոնդակ չէր կարելի լսել բնագանցական խորթ նութիւն մ'էր, իր ամբողջութեանը մէջ անընդհատ ասուածակոչութիւն մը, որու օրհնութեան շրջուկները հեռէն Երլտըք վրայ կը թափէին: Այդ կոնդակը, որ շատ նկուն սիրտ կրող պատրիարքի մը հոգին ի վեր կը հանէ, Աջոգեանին անգամ չէինք ներքէ Բագրի՞նչպէս ըսեմ «Չայն հառաչանաց» մը անցնելով այդ կոնդակին գլուխը նարեկի մէջ ալ կարելի է գետեղել, այնպէս, որ եթէ սուլթանի դեւերը չի կրնայ հանել, ապահովապէս թեթեւ հիւանդները կը բժշկէ:

Հայոց պատրիարքի մը համար անվայել է այդքան նկունալ, և հայ ազգին համար անպատուութիւն: Բայց կը միտնարինք, որովհետեւ ազգը երբէք բաժին չունի այդ գետնաբարշտութեան մէջ, ընդհակառակը արհամարանք մը ցոյց կուտայ փաշաներու, կղերամիտներու և պնակալէզներու այդ վարմունքին դէմ:

Պատրիարքը շրջապատողները բոլորն ալ սուլթանին հին «աղօթասացներն» ու «խնկարկուններն» են: Գուրգէն մուրկէնի պէս մարդիկ, որոնք գրականութեան այդ ճիւղը խղճամիտ կերպով մշակած են:

Կարծես սուլթան ու պատրիարք դաշինք կնքեր են, որ հայոց պատրիարքը Թիւրքիոյ վեհապետին համար օրհնաբանող ու գովաբանող մեքենայ մ'ըլլայ: Ասոր համար է, որ ամեն անգամ, որ առիթը կը ներկայանայ ժողովուրդին քարոզ խօսելու, Օրմանեանը ս. կոյս, խելքիկ հրեշտակները, առաքեալները, ս. հայրերը բոլորը գերեզմաններէն ու իրենց երկնային թաքստոցներէն դուրս կը կանչէ և կը հայցէ, որ անսասան պահեն սուլթան Համիտը իր գահուն վրայ. իսկ ժողովուրդն ալ կը յորդորէ, որ ճանչնայ սյդպիսի վեհապի մը յարգը, որուն հայրական գթութիւնը... 200000 դիակ փռեց հայ աշխարհին վրայ:

Սուլթանն վերջին ծայր գոհ ցոյց կուտայ ինքզինք նոր պատրիարքէն: Օրմանեանի օրհնութիւնները, ինչպէս կերեւի, Արմաշի Չարխափանէն եկած ըլլալուն, սուլթանի խանգարւած մտքին վրայ ազդեցութիւն ըրեր են:

Ծննդեան օրը, երբ քահանան կոնդակին մէջ կը խրատէր հայ ժողովուրդը, որ համբերէ և յոյսը Աստծոյ վրայ դնէ, յանկարծ մեղմ ձայն մը լսեցաւ բազմութեան մէջէն, որ կըսէր՝ «տէր հայր, ատանկ Աստուծուն աչքը կուրնայ»:

Այդ ձայնը իր խորին մեղմութեանը մէջ որոտում մ'էր:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

Ըստ երևոյթին մենք նշանաւոր դէպքերի նախընթաց օրերուն ենք գտնուում:

Մի քանի օրից յետոյ «վեց մեծ» պետութիւնների Պոլսոյ «վեց մեծ» ներկայացուցիչները կառաջարկեն սուլթանին բարենորոգումների մի նոր ծրագիր, որ մշակուել է այդ ներկայացուցիչների ընդհանուր համաձայնութեամբ: Սպասուում է միայն, որ մեծ պետութիւնները վաւերացնեն իրենց ներկայացուցիչների երկար աշխատութեան ծանր պտուղը և համաձայնութիւն կայացնեն այն միջոցների վրայ, որ պէտք է գործ դնեն Սուլթան-Համիդին խելքի բերելու, եթէ միայն նա համարձակի ջնդուները ներկայացրած ծրագրերը, կամ թէ զանազան խաղերով աշխատի չիրագործել նրան:

Թէ ինչ է այդ ծրագիրը, ինչով է տարբերուում նախկին ծրագրերէն, ինչ նոր դարման է գտել խորիմաստ դիպլոմատիան «սուլթանին պահպանելով», հայ ժողովրդի բազմութիւն և խորը խոցերը բուժելու, դա դեռ յայտնի չէ ոչ ոքի: Վեց դեսպանները անսովոր լուութիւն են պահպանում և ոչինչ չեն յայտնում մինչև իսկ միւս պետութիւնների ներկայացուցիչներին: Դեսպանական խորհրդակցութիւնները այս անգամ տեղի են ունեցել առանց թարգմանների, դռները փակ, մինչև իսկ պատահանների փեղկերը ծածկած:

Ի զուր է սուլթանը կողմնակի հնարներ մտածում այդ գաղտնիքների մէջ թափանցելու, ի զուր են ծրագրերը լրտեսները դեսպանատների շուրջը վխտում, ի զուր են նրանք դեսպանների խորհրդատեղի փակ փեղկերը դիտում... ամեն ինչ թաղած է առայժմ խորհրդաւոր լուութեան մէջ: Եթէ հաւատանք «Սէմաֆօրի» Պոլսոյ թղթակցին, սուլթանի մի քանի մերձաւոր բարեկամները նրա լինելով հոգին խաղաղացնելու նպատակաւ վճռած են եղել նոյն իսկ յափշտակել դեսպաններից մէկին, նրանից գաղտնիքները կորզելու համար: Այս տեսակ օրեր սուլթանը վաղուց չի տեսել, ընդհանրութեան կողմից այսպիսի ճառեր նա վաղուց չի լսել: Նրա երէկայ խնկարկունները, եւրոպական հասարակական կարծիքի դիմաց նրա հզօր պաշտպանները, «Ֆիգարօ»-ի, «Տան»-ի նման սողացող լրագրիւնները այսօր փրփուրը բերանին են շանթեր արձակում սուլթանի դէմ, դիպլոմատիայի հետ ձեռք ձեռքի տւած և քաղաքակիրթ հասարակութեան աչքից անօրինակ բարբարոսութիւնները ամենայն խնամքով ծածկողները այսօր կատաղի արշաւանք են սկսել դիպլոմատիայի դէմ: Նրա անխիղճ ընթացքը արատ են համարում մարդկութեան համար և տատանումը բարոյական սրնանկութիւն: Սուլթանին դասեր տւող, նրա գազանութիւնները խրախուսող ռուս դիպլոմատն այսօր սպառնալիքներ է յղում ուղղակի սուլթանին և այն էլ

ցարի բերանից:

Ի հարկ է, ոչ իւրաքանչիւր ընդէ կաշառելու պատրաստ հրապարակասոսները, ոչ սողուն ճառախօսները և ոչ օձի լեզու բանեցնող դիպլոմատներն չեն կարող մեր դրութեան բարեգործական պատճառները լինել: Բայց այս բոլորը իրերի փոփոխման արտայայտութիւն է և պարզ նշան, որ ռուսի որոտը լսած դիպլոմատները և ֆինանսիստները հանգստութիւն չեն գտնում:

Սակայն ի՞նչ կարող է մեզ տալ «Եւրոպական համաձայնութիւնը», որն այդպէս սրտատրոփ սպասում է, որը միակ միջոցն է համարուում արեւելեան կնճռոտ հարցին բաւարար լուծում տալու և որն այսօր իրականացած է երևում:

Եթէ ճշմարտութիւն է 6 պետութիւնների, — չմոռանանք՝ իրար թշնամի պետութիւնների — կայացած համաձայնութիւնը, դա միայն պարզ կերպով մեզ դուշակել է տալիս, որ բարենորոգումների նոր ծրագիրը ոչ մի իրական փոփոխութիւն, ոչ մի արմատական դարման իր մէջ չէ պարունակում: Այլապէս դրանից անպատճառ կը տուժէր այս կամ այն պետութիւնը, ուրեմն և համաձայնութիւն էլ չէր կայանալ:

Մի կողմը թողնելով այս հանգամանքը և ենթադրելով որ խոշոր փոփոխութիւն է ծրագրւած, հարցնում ենք. տեղական է արդեօք այս համաձայնութիւնը, Կրիլովի բարեկամ-չների նման պետութիւնները չեն գողգղելու իրար, հենց որ մի ոսկոր ասպարէզ նետուի: Դեռ նոր է Ռուսաստանը սկսել քիչ խիստ լեզու բանեցնել, արդէն Եւրոպան նոր հնարքներ է մտածում՝ նրա ազդեցութիւնը Բոսֆօրի ափում կոտրելու: Դեռ նոր է ֆրանսիական մամուլի ազդեցիկ մասը համարձակ ձայնով ճշմարտութիւնները մերկացնում, ֆրանսիական դիպլոմատիան քիչ բարձր խօսում, արդէն նրա «դաշնակից» ռուսական մամուլը բարձրացնում է իր թաթը և հրաւիրում իր սիրելիին՝ շատ հեռու չգնալ ու իր չափը ճանաչել:

Եւրոպական համերաշխութիւնը չի կարող յարատեւ լինել: Երբտեւ է նա, յարատեւ է և սուլթանի դրութիւնը, յարատեւ են մեր տանջանքները, յարատեւ է ուրեմն և յեղափոխութիւնը, որը իւրաքանչիւր ընդէ կարող է խախտել ընդհանրութեան աչքը շլացնող «համերաշխութիւն» կոչւած սֆինքսը: Մեր յոյսը այն տեսակ համերաշխութեան վրայ չէ, որ ձգտում է համերաշխ լինել և սուլթանի հետ: մեզ այս տեսակ եւրոպական համերաշխութիւն չի հարկաւոր, այլ եւրոպական անհամերաշխութիւն և որքան կարելի է սուր անհամերաշխութիւն:

1877թ. եւրոպական պետութիւնների ընդհանուր համաձայնութեամբ որոշ պահանջներ դրեցան սուլթանին Բալկանի վերաբերմամբ: Այդ պահանջները մերժեցին: Համերաշխ Եւրոպան յետ նահանջեց ամօթով և անզօր գտնեցաւ իր սպառնալիքները գործադրելու:

Հարժեց սակայն Բաղնիքի թերակղզին, խորտակեց եւրոպական համերաշխութիւնը և ստիպեց Ռուսաստանին վճռական քայլն անելու:

Մենք տեսանք դիպլոմատների հաւաքական նօտաների, համերաշխ սպանալիքների, մարտանաւերի համերաշխ զբօսանքների... բոլոր արդիւնքը: Դիպլոմատների նոր գիւտը՝ պատուհանների փեղկերի խորհրդաւոր բաց ու խուփ անելով սուլթանին վախեցնելը մեզ չպէտք է խաբի. շարժենք մենք էլ, քանդենք այդ հմայիչ համերաշխութիւնը և ստիպենք մէկին կամ միւսին՝ առաջին գործնական քայլն անելու:

ԿՐԷՏԷ ԵՒ ԿՈՒՐԱ

Անցեալ անգամ մենք մասնաւոր իշխանի կողմէն լարած դրուծեան վրայ, այժմ հեռագրները հաղորդում են մէկը միւսից ծանր տրեք: «Դէյլե-Նիզի» թղթակիցը հեռագրում է՝ «Գանէում» դրուծիւնը ծննդածամական է: Ապստամբ քրիստոնեաների թիւը 3000 է... Բրիտանական զորքերը Տարատսան գիւղը, իսկ մասնաւորականները Հիւսիսարիս եւ Մուրնիս:

Փետրուարի 3-ին Կրետէի եպիսկոպոսը եւ երեւելիները հեռագրաւորապէս ներկայացրել են մի մեծ ծրարում, որով պահանջում են պետութիւնների եռամսհուն միջամտութիւնը եւ թէփօրմների անպատշաճ զործադրութիւնը: Հակառակ դէպքում, կրետացիք ամեն միջոց պիտի գործ դնեն Յունաստանի հետ միանալու:

Կանէից պաշտօնապէս հաղորդում են, որ կոտորածն անելի է: Հաստատում են, որ ամբողջ քաղաքը բոցերի մէջ է:

Բրիտանական պահանջում են, որ Եւրոպական մարտանաւերից զօրքեր իջնեն պաշտպանելու համար մնացածը: Հիւսիսայինները մերժում են: Բաղադրի քրիստոնեաներին ազատելու ոչ մի յոյս չկայ: Երէկ տաճիկ զինուորները սկսեցին հրացաններ արծակել պատնէշների գլխից ազգաբնակչութեան վրայ: Զոհերի թիւը անյայտ է: Առաւօտը հրացանածգութիւնը վերսկսել է: Հիւսիսայինները քաղաք իջան ծովի կողմից: Բրիտանական թաղերի կէսը այրւած է: Մուլթանական կառավարութիւնը այս բոլոր խառնակութիւնները ձգել է թէփօրմների գործադրութեան արգելք լինելու համար:

Մասէօի մահից յետոյ սպանիական կառավարութիւնը մեծ յոյս ունէր շատ հեշտութեամբ յաղթութիւններ տանել եւ կարճ ժամանակամիջոցում կռքական ապստամբութիւնը գաղել: Սպանիական զենեակ Վէյլե վաղուց արդէն խրոխտանում էր իր ապագայ յաղթութիւններով: Բայց ցաւը նրանումն է, որ սպանիացիք իրենց շահագրգիռ վառ երեսակայութեան շնորհիւ ց ա ի կ ա ղ ա ղ արդէն կատարւած են համարում ու անընդհատ «յաղթութիւններ» տօնում:

Վերջերս սպանիական լրագրիւնները ցնծութեամբ հաղորդեցին, որ շատ ապստամբներ զինաթափ են եղել եւ որ Մասէօի ու Նիկիոյ, ապստամբութեան միւս նշանաւոր դեկավար՝ Մաքսիմո Գոմէշը Հարդուած, ուժասպառ եղած դիմել է կառավարութեան, հապանդութիւն յայտնել եւ թողութիւն խնդրել: Ի հաստատութիւն այս տրեքի հեռագրիւնները հաղորդեցին, որ կղզու արեւելեան մասի ապստամբները յարձակւել են զինուորական պաշար տանող երկու զօրեղ զնտերի վրայ եւ լաւ չարք են տուել:

Կուբացիներին օգնութեան համող տեխասցիները նոյնպէս մի փութաւոր շարք են տուել սպանիացիներին: Սպանիական մի հեծելազորն յանկարծակի բռնւում է տեխասցիներից, կոտորում եւ ցիր ու ցան լինում, թողնելով պատերազմի դաշտի վրայ քաղմաթիւ սպանւածներ, վիրաւորւածներ եւ ահագին քանակութեամբ ռազմամթերք:

Պիւսար նահանգում, որը վերջնականապէս ընկնւած էր հռչակում, երեւան են եկել յանկարծ ապստամբական նոր զնտեր եւ Մաքսիմո Գոմէշը չարք էլ է սպանիական մի մեծ զուստ, զերի վերջընը 900 հոգի, իսկ 5000 հրացան, 18 թնդամօթ եւ շատ ռազմամթերք:

Նոր կռիւներ են տեղի ունեցել Հավանայի նահանգում եւս: Ապստամբները ղինամիտով օղն են քարծրացրել երկաթուղու մի գնացք: Սպանիա ու վիրաւորւել են շատ սպաներ ու զինուորներ:

Այս բոլորը ի հարկէ դնու քաղական չէ սպանիական վառ երեւակայութիւնը սանձահարելու: Եւ մենք դեռ քախտ կունենանք սպանիական փառաւոր «յաղթութիւնների» նոր շարքեր կարդալու:

ՆԻՌԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՅԸ

Հ. Յ. Դաշնակցութեան կենդր. սնդ. մէջ ստացւած են. Զնդան 7 ռուբլի, № 225 20 ռուբ., № 213 214 215 25 ռուբ. 80 կոպ., № 217 5 ռուբ. 70 կոպ., № 218 4 ռուբ. 35 կոպ., № 216 12 ռուբ. 50 կոպ., № 210 18 ռուբ., № 261 22 ռուբ. 50 կ., № 219 88 ռուբ. 35 կոպ., № 228 15 ռուբ.

Մախլացից 2,000 ռուբ., Փայտակարանից 25 ռուբ., Օազիս գիւղից 90 ռուբ., Լուսադէմին խմբից 3 և 4 ռուբ., * * -ից 311 ռուբ., Սարեակ 13 ռուբ., Լագ-ից 55 ռուբ.

Օդ. ք-ից Մ. Բ.-ից Բորի միջոցով 500 ռուբ. Վրէժ Կոմիտէի կենդ. սնդուկի մէջ ստացւած են. Հիւսիսային բւեռից 4500 ղան, Ոչ. քաղ. Հին ընկեր 100 ղան, Տ. Օ. 100 ղան, Ոմ 30 ղան, Իրաւունք 10 ղան, Յոյս 10 ղան, Ազն. 50 ղան, Ս. 150 ղան, Յաջողութիւն 20 ղան, Արդու-Բահիմ 30 ղան, Յ. Է. 10 ղան, Ոմ 10 ղան, Գ. Պ. 15 ղան, Պ-ով 30 ղան, Մ. 30 ղան, Մէկը 4 ղան.

Դաշնակց. Ռուսչուկի կոմիտէի սնդ. մէջ ստացւած են.

Գաղտնապահ 108 ֆր., Նոր Աշխարհ 52 ֆր. 50 սանտ., Արարատ 27 ֆր., Գաւառներ 36 ֆր., Երկաթ 7 ֆր., Պանդուխտ 20 ֆր., Արծնեցի 40 ֆր., Հրացան 10 ֆր., Լոյս 5 ֆր., Յ. Բ. 10 ֆր., Ռումանիոյ ճիւղ-ճեմօ քաղաքի ազգասէր բանւորներից 107 ֆր. 50 սանտ., Մուրճ խմբից 6 ֆր., Արուսեակ Տ-ից 4 ֆր., Սիլիսարէ յեղափոխական ընկերից 1 նապ. ոսկի:

Թաւրիզից՝ Գարեգին Իւսուֆեան 100 ֆր.

Աւստ. Սուչովա քաղ. Մկրտիչ Թէօփիլեանից 2 ֆլորին: Պարիզի կոմիտէի միջոցով.

Ս. Մ. 1 ֆր., Ն. Մ. 5 ֆր., Մ. Գ. 1 ֆր., Bonceret 5 ֆր., Փ. 10 ֆր., Ոսկէճին 10 ֆր., Երկաթ 5 ֆր., Ակնոց 2 ֆր., X. 2 ֆր., Գլխարկ 3 ֆր., Ապառաժ 2 ֆր., Երասի 2 ֆր., Մկրատ 1 ֆր., Բազուկ 1 ֆր., Վագր 2 ֆր., Պատերազմ 1 ֆր., Յեղափոխական 2 ֆր., Sanim 25 ֆր., Դերձան 1 ֆր., Սերմ 50 սանտ.

Վարնայի սնդուկի մէջ ստացւած են՝

Թիւ 25 Գեղամից 40 ֆր., Կարդոսեան խմբից 10 ֆր., Մ. Արտաւազդից 8 ֆր., Հարազատ 4 ֆր., Կայծակ 2 ֆր., Օժանդակ 5 ֆր., Զրվէժ 20 ֆր., Վահրիճ 1 ֆր., Քացախ 1 ֆր., Արիւն 1 ֆր., Հայկ 1 ֆր.

Նոյն տեղը ստացւած է Հուլիայի մասնաճիւղէն.

Վարած խմբից 18 ֆր. 60 սանտ., Ուժանակ խմբից 5 ֆր. 80 սանտ., Ռուբր խմբից 8 ֆր. 95 սանտ., Մասնաճիւղի անդամներից 44 ֆր., Հրացան 6 ֆր. 50 սանտ., Յոյս 4 ֆր., Կայծ 10 ֆր. 70 սանտ., Դանձանակից 26 ֆր. 45 սանտ.

Եւրոպի Սասունեան կոմիտէի սնդ. մէջ ստացւած է Գարա-Պուլնայի պանդուխտներից 110 ֆրանկ:

Հ. Բերն քաղաքի նոր գաղթականներից՝ Գործաւոր 3 ֆր., Յ., Ն., Լ., Գ., Պ., Արթին և Ասորի մէկ մէկ ֆր.

Վ. ր. ի. պ. ա. կ. — № 2 տպւած Վարնայ «Կամաւորաց» խմբից 50 ֆր. պէտք է լինի 10 ֆր.

Մեր բոլոր ջանքերը՝ ձեռք բերել Սամաթիայի նահատակ Դնո-նոն լուսանկարը, իգուր անցան: Խնդրում ենք նրա քարեկամներից ուղարկել մեզ վերոյիշեալ լուսանկարը, կարճ ժամանակամիջոցում վերադարձնելու պայմանով:

Խմբագրութեան գիմել հետեւեալ հասցեով՝
Rédaction du Droschak, Genève (Suisse)